


ԲՈՂՈՔԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ

Գերմանական բողոքական շրջանները նորից վրդովու ած են եկեղեցական ազատամտութեան նոր արտայայտութեամբ։ Սոյն տարրուայ սկզբին Բըէմէն քաղաքի սենատը մի բողոք ստացաւ, որը ստորագրել էին 30 հոգի պահպանողական պառտօններ։ Այդ բողոքագրով նրանք հրաւերում էին սենատի ուշագրութեւնը պաստօր Մառուրիցի մկրտութեան ձևի վրայ, որը նա կատարում է որպէս հասարակ օրհնութիւն՝ երբեմն նոյն իսկ առանց ջրե՛ հակաբրիստոնէական ձևով։ «մկրտում եմ քեզ յանուն բարւոյ և յառաջադիմութեան»։ Քննութեան ժամանակ Մառուրիցը խոսավանուեց, որ իրաւ 1900 թուից սկսած գագարեց քրիստոնէական մկրտութեան ձևը գործածելուց և սկսեց օդուուել այլ ձևերով, որոնք այնուամենայնիւ բոլանդակում են Աստուծոյ յիշատակութիւնը։ Սենատը քննելով յիշեալ գործը եկեղեցական իւսուարանական ահսակէտից, Մառուրիցի վերջին տարիների ընթացքում կատարած մօտ 600 մկրտութիւնը ճանաչեց և յայտարարեց անվաւէր։ Մառուրիցը առաջարկեց նորէն մկրտել բոլորին օրինական ձևով, բայց այդ բանում չը համաձայնեցին ծնողները։ Իրենց՝ մօտ 1500 ստորագրութեամբ ներկայացրած յայտարարութեամբ՝ նրանք ունատից խնդրում էին ոչնչացնել տուած վճիռը։ Հակառակ գէսլքում սպառնալով թողնել և հեռանալ եկեղեցուց։ սակայն սենատը բացէ իրաց մերժեց նրանց այդ առաջարկը։

Խիստ ազգով կերպով բողոքեց վերջերս Գերմանական բողոքականութեան գրական կուսակցութիւնը՝ «քայքայող» աստուածաբանութեան դէմ եկեղեցում այն բազմանդամ եկեղեցական ժողովում, որը կայտցաւ Բերլինաւմ մայիսի 2—3-ին։ Նա հրաւերուած էր աղատամիտ աստուածաբանների ժողովով մէջ տարածած մատչելի դասախոսութիւնների և գրքերի պատճառով, որպիսիք են Lebensfragen Վ.օնինէլի, կամ «Religionsgeschichtliche Vulkusbücher» Շիլլէի։ Մասնակցողների ահագին թիւը, մասնաւանդ աշխարհականների, որոնք հաւաքուել էին Գերմանիայի գանազան կողմերից և սրոնց թիւը սպասածից անցաւ, վկայեց, որ ժողովրդի մէջ տեղի ունի շատ ուժեղ շարժում՝ պաշտականելու իրենց գաւանութեան հիմունքները։ Ժողովում կարգացուած բոլոր դասախոսութիւններն ու ճառերը գրական

ըռվանդակութիւն ունէին և այն միտք էին արտայայտում, որ ամուր պէտք է պահպանել Աւետարանի գուշանութիւնը և ամեն ըանից առաջ Յիսուս Քրիստոսի Աստուածութիւնը: Ամենանշանաւոր դաստիառութիւններ կարգացին ուսուցչապետ Լիտգերտը «Քրիստոսէութիւնն ու Աստուածաբանութիւնը» ուսուցչապետ էկէն «Նոր Աստուածաբանութիւնը և աւետարանական եկեղեցու կեանքը», և պատոր Գալֆը՝ «Նորագոյն Ժամանակի քայլայից աստուածաբանութիւնը և եկեղեցական օրէնքնեւն ու դաւանութիւնները»:



ԱՆԱՊԱՏԱԿԱՆՆԵՐ ԵԻ ՎԱՆԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ

Զ.

Մեծն Բարսեղի եւ Դրիզոր Աստուածաբանի կրութիւնը: Բարսեղը ուսումնասիրում է արեւելի կրօնաւորական եւ անապատական կեանքը: Նա Պոնտոսում հիմնում է վանքեր եւ Գրիզոր Աստուածաբանի հետ կրօնաւորական կեանք վարում: Նրանց եւ վանականների զբաղմունիները: Անախորեսներ եւ Կինովիտներ. Վանական դառնալու նրապոյը ընդհանրապէս: Բարսեղը Կեսարիայի արքեպիսկոպոս: Գրիզորի դժգոհութիւնը Բարսեղից: Գրիզորը Կ. Պօլսում. Երկու մեծ բարեկամների ազդեցութիւնը արեւելեան եկեղեցում: Բարսեղի եւ Գրիզորի մանը:

Բարսեղ Մեծն ու Գրիզոր Աստուածաբանը դեռ պատանեկան հասակում, իրանց հայրենիքում — Կապագովկիայում, որ Սեբաստիայից հեռու չէր, Եւստաթէոսի խոտակրօնութեան համբաւը լած լինելով՝ անտարբեր չէին դէպի նա և դէպի կրօնաւորութիւնը: Հստ Ֆարրարի նրանք¹⁾ Աթէնքում, իրանց ուսանողութեան ժամանակ, հա-

1), Բարսեղ մեծի և Գրիզոր Աստուածաբանի մասին մեր գրտիտուր աղբիւրն է Ֆարբալի Հայու և Տրուդ Ը. Օգծօվ.